ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 17 » փետրվարի 2025թ. ՆՄՈ/253 -Լ

*ք. Արմավիր*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԵՐՎԱՆԴ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերով, 19-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N1550-Լ որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով հաստատված N3 հավելվածի 19-րդ կետի 32-րդ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի փետրվարի 10-ի ՆՄՈ/ 206-Ա և փետրվարի 12-ի ՆՄՈ/208-Ա որոշումները.

**որոշում եմ՝**

1. Կատարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Երվանդ Խաչատրյանի պարտականությունների բաշխում համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

**ՄԱՐԶՊԵՏ՝**

2025-02-17 17:25:41 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից
eID

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2025 թվականի փետրվարի 17-ի NՄՈ 053 -Լ որոշման

**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Երվանդ Խաչատրյանին վերապահված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների որոշակի աշխատանքների կատարման աջակցումը**

1. Իրավաբանական բաժնին առնչվող աշխատանքների կատարման աջակցում.
2. Անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման և փաստաթղթաշրջանառության բնագավառին առնչվող աշխատանքների կատարման աջակցում:

**Գլխավոր քարտուղար՝** **Ա. Հովհաննիսյան**

Недействительная подпись
VERIFIED OCSP 17.02.2025 16:58:55 GMT+4
Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023